

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2019-2020 ուստարի)**  
**12-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)**

*Միրելի՛ աշակերտ, պատմության օլիմպիադայի հանրապետական փուլում նախատեսված են նոր տիպի մի քանի առաջադրանքներ, օրինակ՝ աշխատանք ուրվագծային քարտեզի, նկարի, սկզբնաղբյուրի կամ գծապատկերի հետ, որոնք ուսումնական ծրագրի պարզօրինակ վերարտադրության փոխարեն պահանջելու են աշակերտի վերլուծական որոշ հմտություններ:*

**ա) Հայոց պատմություն (15 միավոր)**

- |  |                           |
|--|---------------------------|
| 1. Ե՞րբ է սկսվել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը.   | 0,5 մ.                    |
| ա/ 1877 թ. ապրիլի 30-ին  | բ/ 1877 թ. օգոստոսի 17-ին |
| գ/ 1877 թ. հունվարի 30-ին  | դ/ 1877 թ. ապրիլի 12-ին   |
| 2. Ո՞վ է հեղինակել «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում» ուսումնասիրությունը. | 0,5 մ.                    |
| ա/ Անտոն Գարագաշյան  | բ/ Ղևոնդ Ալիշան           |
| գ/ Ալեքսանդր Երիցյան   | դ/ Ստեփանոս Պալասանյան    |
| 3. Որտե՞ղ է թագավոր օծվել Սմբատ Սեֆեդինյանը.   | 0,5 մ.                    |
| ա/ Ս. Էջմիածնում   | բ/ Վանում                 |
| գ/ Աղթամարում  | դ/ Անիում                 |
| 4. Ո՞վ է եղել ԼՂՀ ԳԽ առաջին նախագահը.  | 0,5 մ.                    |
| ա/ Ռոբերտ Քոչարյան   | բ/ Արթուր Մկրտչյան        |
| գ/ Աշոտ Ղուլյան  | դ/ Արկաղի Տեր-Թադևոսյան   |
| 5. Ո՞ր թվականին է կնքվել «ամոթալի» պայմանագիրը.  | 0,5 մ.                    |
| ա/ 363 թ.  | բ/ 450 թ.                 |
| գ/ 374 թ.  | դ/ 298                    |
| 6. Քանի՞ գավառ ուներ Մեծ Հայքի Վասպուրական նահանգը.  | 0,5 մ.                    |
| ա/ 33  | բ/ 37                     |
| գ/ 29  | դ/ 41                     |
| 7. Ո՞վ է հաջորդել Թեոդորոս Ռշտունուն և ստանձնել հայոց իշխանի պաշտոնը.                              | 0,5 մ.                    |
| ա/ Գրիգոր Մամիկոնյան   | բ/ Ներսեհ Կամսարական      |
| գ/ Համազասպ Մամիկոնյան   | դ/ Աշոտ Բագրատունի        |
| 8. Ե՞րբ է տեղի ունեցել Չալդրանի ճակատամարտը.   | 0,5 մ.                    |
| ա/ 1514 թ.   | բ/ 1550 թ.                |
| գ/ 1555 թ.   | դ/ 1502 թ.                |
| 9. Ո՞վ էր 1914 թ. ձևավորված կամավորական III ջոկատի հրամանատարը:                                    | 0,5 մ.                    |
| 10. Ո՞վ է 1947 թ. ընտրվել Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ:                             | 0,5 մ.                    |
| 11. Ո՞վ էր ուրարտական Խալդի աստծո կինը և դիցարանի գլխավոր աստվածուհին:                             | 0,5 մ.                    |
| 12. Ո՞ր քաղաքի ինքնապաշտպանությունն էր ղեկավարում Ղուկաս Տեովլեթյանը:                              | 0,5 մ.                    |
| 13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)                 |                           |
| ա/ Շուշիի թեմական դպրոցի բացում  |                           |
| բ/ Լազարյան ճեմարանի բացում  |                           |
| գ/ Ներսիսյան դպրոցի հիմնում  |                           |
| դ/ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հրատարակում  |                           |

ե/ Աղաբաբյան դպրոցի հիմնում  
 գ/ Էջմիածնի թղթի գործարանի կառուցում  
 է/ Միքայել Չամչյանի «Պատմություն Հայոց» եռահատոր աշխատության տպագրում  
 ը/ Կալկաթայում հայ իրականության մեջ առաջին երկսեռ դպրոցի բացում  
 թ/ Խ. Աբովյանի կողմից Ֆ. Պարոտի արշավախմբի հետ Արարատի գագաթի նվաճումը  
 ժ/ «Ազդարար»-ի հրատարակումը Մադրասում

1	2	3	4	5	6	7	8	9	10

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. «Հյուսիսափայլ»
2. «Մշակ»
3. «Խրիմյան Հայրիկը Էջմիածնում»
4. «Պատմություն Տարոնոյ»
5. «Կանոնագիրք Հայոց»
6. Նոր Գետիկի վարդապետարան

- |                         |                       |                    |
|-------------------------|-----------------------|--------------------|
| ա. Հովհաննես Այվազովսկի | բ. Հովհան Մամիկոնյան  | գ. Հովհան Գ Օձնեցի |
| դ. Մխիթար Գոշ           | ե. Ստեփանոս Նազարյանց | զ. Գրիգոր Արծրունի |

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Տիգրանակերտի ճակատամարտը տեղի է ունեցել Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 1-ին:  
 բ/ Հայ-թաթարական ընդհարումները սկիզբ են առել 1906 թ. հոկտեմբերի 6-ին:  
 գ/ Արտաշատը կառուցվել է Ք.ա. մոտ 195 թ.:  
 դ/ Ք.ա. 84 թ. հայկական բանակներն առանց դիմադրության մտան Ասորիք  
 ե/ 1924 թ. Խորհրդային Հայաստանում ստեղծվել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն:  
 զ/ Եվրոպայի խորհրդին ՀՀ լիիրավ անդամակցությունը տեղի է ունեցել 2001 թ. հունվարի 25-ին:  
 է/ 1991 թ. հոկտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն  
 ը/ Ք.ա. VI դարից սկսած Հայաստանում կիրառվում է հունարենը՝ իր այբուբենով:  
 թ/ 1904 թ. Սասունի ապստամբությունն ավարտվել է հայերի պարտությամբ:  
 ժ/ 1722 թ. Պետրոս I-ը կազմակերպել է Կովկասյան արշավանքը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

- ա/ «Հայոց Արևելից կողմանք»-ի մեջ էին մտնում Մեծ Հայքի Այրարատ, Գուրգարք և Արցախ աշխարհները:  
 բ/ «Արտաշատի պողոտա»-ն Վաղարշապատի արևելյան դարպասից սկսող և Արտաշատին կապող ճանապարհն էր:  
 գ/ «Մաղխազական այրուձին» տեղակայված էր երկրի սահմաններում և պատրաստ էր ընդունել հակառակորդի առաջին գրոհը:  
 դ/ XIX դարում Արևելյան Հայաստանում «պրոլետար» էին կոչվում բարեկեցիկ գյուղացիները:  
 ե/ «Ֆիդային» եզրը գալիս է պարսկերենից և նշանակում է «զոհ»:  
 զ/ Կիլիկյան Հայաստանում բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ զբաղվող գործակալության ղեկավարը կոչվում էր «մարաջախտ»:

է/ Ոգեպաշտությունը կոչվում է ֆետիշիզմ:

ը/ 1970-ական թթ. կեսից մինչև 1980-ական թթ. կեսը ԽՍՀՄ պատմության մեջ մտավ «ձնհալ» անվամբ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվեց ութ կետից բաղկացած հայ-ռուսական համաձայնագիր:

բ/ Հայ նախարարական տան գլխավորը կոչվում էր տեր կամ տանուտեր:

գ/ Արշակ թագավորը Վասակ սպարապետի ուղեկցությամբ 368 թ. մեկնում է Պարսկաստան:

դ/ 1959 թ. Խորհրդային Հայաստանում մտցվել է ութամյա պարտադիր կրթություն:

ե/ «Հայաստան» համահայկական հիմնադրամը ստեղծվել է 1982 թ. մարտին Երևանում:

զ/ 1956 թ. փետրվարի 16-ին Մոսկվայում բացված ԽՄԿԿ XX համագումարում «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների մասին» զեկուցումով հանդես է եկել Լ. Բրեժնևը:

է/ Նանե դիցուհին համարվում էր հյուրընկալության հովանավորը:

ը/ Ք.ա. 521 թ. Հայաստանը ճանաչել է Աքեմենյանների գերիշխանությունը:

թ/ 1867 թ. վարչական փոփոխությամբ Անդրկովկասը բաժանվել է հինգ նահանգների:

ժ/ 1677 թ. Էջմիածնում գումարվել է գաղտնի ժողով:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.

*Ըստ Քսենոփոնի վկայության՝ առևտուրը Հայաստանի և Միջագետքի միջև կատարվում էր Եփրատ գետով:*

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Բարենորոգումների ծրագրի կապակցությամբ Շապին Կարահիսարից շուրջ 500 հայերի նամակը Ռուսաստանի դեսպան Նելիդովին (25 հունիսի, 1895 թ.)

*Բարենորոգումների ծրագրի հարցը նոր չէ, և մենք հաճախ ենք հուսախաբ եղել մեր արդար սպասելիքներում, որոնք, թվում է, վաղուց պիտի կենսագործված լինեին... Նորից հայկական բարենորոգումների իրականացման ծրագիրը նորին սուլթանական մեծությանը հանձնարարելը ծաղր չէ՞ արդյոք մեր հանդեպ: Մեզ համար պարզ է, որ մեր չսպիացած վերքերից պիտի առավել արյուն հոսի, մի կողմից՝ տնտեսական ճգնաժամը, մյուս կողմից՝ հալածանքներն ու աներևակալելի տանջանքները մեզ վերջնական անկման կհասցնեն:*

ա. Ե՞րբ էին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները սուլթանին հանձնել բարենորոգումների ծրագիրը:

բ. Ասելով, որ «բարենորոգումների ծրագրի հարցը նոր չէ», ո՞ր թվականին միջազգային հարաբերություններում ամրագրված բարենորոգումների անհրաժեշտությունն էին ակնարկում նամակի հեղինակները:

գ. 1890-ական թթ. կեսերին Հայկական հարցի լուծման խնդրում Ռուսաստանը առաջին հերթին ո՞ր պետությանն էր փորձում հակակշռել՝ թույլ չտալով վերջինիս ազդեցության ընդլայնումը:

**բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)**

1. Ո՞վ է կառուցել «Արքայական ճանապարհը». 0,5 մ.  
 ա/ Կյուրոս Մեծ բ/ Դարեհ I  
 գ/ Քսերքես I դ/ Դարեհ II
2. 919 թ. Եվրոպայում առաջացավ՝ 0,5 մ.  
 ա/ Բյուզանդական կայսրությունը բ/ Մերովինգների պետությունը  
 գ/ Ռուսական պետությունը դ/ Գերմանական թագավորությունը
3. Ե՞րբ է Լայպցիգի մոտակայքում տեղի ունեցել «Ժողովուրդների ճակատամարտը» 0,5 մ.  
 ա/ 1815 թ. բ/ 1813 թ.  
 գ/ 1807 թ. դ/ 1809 թ.
4. Աշխարհում առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինը տիեզերք է թռել՝ 0,5 մ.  
 ա/ 1955 թ. բ/ 1961 թ.  
 գ/ 1969 թ. դ/ 1971 թ.
5. Ինչպե՞ս էին հին հույները կոչում բոլոր օտարներին: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)  
 1. Կորեական պատերազմ  
 2. Կարիբյան ճգնաժամ  
 3. Ու. Չերչիլի Ֆուլտոնյան ճառը  
 4. Բեռլինի պատի փլուզում

ա. 1950-1953 թթ.    բ. 1946 թ.    գ. 1989 թ.    դ. 1962 թ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)  
 ա/ Ավատատերերի դասակարգը վաղ միջնադարում կազմում էր բնակչության 20 %-ը:  
 բ/ Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Գերմանիան թուլացավ, իսկ Անգլիան, Ֆրանսիան, Ճապոնիան և հատկապես ԱՄՆ-ը հզորացան:  
 գ/ Ք.ա. 34 թ. Հուլիոս Կեսարը Ծերակույտի դահլիճում դավադրության զոհ դարձավ:  
 դ/ Բուդդայականությունը ծագել է Ք.ա. III հազարամյակում:  
 ե/ 466 թ. Իտալիայում տեղակայված գերմանական վարձու զորքերի հրամանատար Օդոակրը գահընկեց արեց վերջին կայսր Հռոմուլոս Ավգուստուլոսին:  
 զ/ Ցին Շի Հուանդին կառավարել է Ք.ա. V դարում:  
 է/ Ժողովուրդների մեծ գաղթը տեղի է ունեցել IV-VII դդ.:  
 ը/ 1938 թ. հունվարի 30-ին Հիտլերը ստանձնել է Գերմանիայի ռայխսկանցլերի պաշտոնը:  
 թ/ 1923 թ. Թուրքիան հռչակվել է հանրապետություն:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի  
 հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,  
 պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.02.2020 թ.